Ալէքսանդրապոլու, Մկրտիչ Սամուրլի գեղջ Բորչալուայ, Կարապետ քահանայի Առաքելեան Ալէքսանդրապոլի, Գրիգոր Տ. Մինասեան, գործակալի Ղափան Բարկուշատի, Խաչատուր քահանայի Տ. Գրիգորեան Երևանցոյ, թ. թ. 270, 272, 273, 275, 277, 288 և կամիլաւկայ գլխաւոր կայ յանուն Արսէն քահանայի Վարդանեան Եկատերինոդարի, Արսէն քահանայի Մկրտչեան գործակալին Օրթաքիլիսայի, Խաչատուր քահանայի Տ. Գէորգեան գործակալի Մեծ Քեափանակի, Աստուածատուր քահանայի Փէշիշքեանդ գեղջ, Զաքարիա քահանայի Տ. Շմաւոնեան նախկին գործակալին Դառնուոյ. թ. թ. 271, 274, 276, 309, 310։

— Ցանուն Գրիգոր քահանայի Տ. Գրիգորեան եկեղեցւոյ հայոց Ս. Պետերբուրգի, որով չնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան թ. 279.

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մարտի 28-ին Սինոդը լուծեց Թիֆլիսի բնակիչ Սարգիս Մայիլեանի և Նունէ Եագորեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Սարգսին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Բաքուի բնակիչ Մովսէս բէկ Եաղուբբէկեանի և Վառվառէի ամուսնութիւնը և թոյլատրեց Մովսէս բէկին նորէն ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Աղէքսանդրապոլի դաւառի Սպիտակ գիւղի բնակիչ Յովհաննէս Տէր-Յարութիւնեանցին և որոշեց դիմել Երևանի պ. Նահանգապետին օրինական համաձայնութեան համար։

Ապրիլի 1-ին Սինոդը ստանալով օրինական թոյլտուութիւն, որոշեց վերադարձնել Վրաստանի և Իմերեթի Կոնսիստորիային Զաք և Լոմատուրց գիւղերի կառուցանելու եկեղեցիների յատակագծերի պատճէնները և հրա-

մայել, որ շուտով շինութեան ձեռնարկելու կարգադրութիւն անի։

Նոյն թուին Սինոդը հաստատեց Երևանի Կոնսիստորիայի եղրակացութիւնը Երևանի վերաբնակչուհի Սաթենիկ Ցարութիւնեանի և Իսրայէլ Սարգսեանի ամուսնալուծութեան մասին և թոյլ տուեց կնոջը նորէն ամուսնանալ միայն երեք տարի ապաշխարելուց յետոյ, որովհետև նա՝ նախ քան ամուսնալուծութիւնը՝ կենակցել է ուրիշ անձնաւորութեան հետ։

Նոյն թուին Սինոդը լուծեց Լոռուայ գաւառի Վարդաբլուր գիւղի բնակիչ Համբարձում Գալստեանի և Սալլու Ցարութիւնեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Համբարձումին նորէն ամուսնանալու։

Ապրիլի 4-ին Սինոդը լուծեց Թովուզ գիւղի բնակչուհի Շուշանիկ Սմբատեանի և Կարապետ-բէկ Տէր-Սահակեան Սմբատեանի ամուսնութիւնը վերջնիս անյայտ բացակայութեան պատճառով և իրաւունք տուաւ Շուշանիկին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի համարեց Կարսի նահանգի Ուղուզլի գիւղի բնակիչ Սմբատ Տէր Գրիգորեան Տէր-Ստեփաննեանցին նոյն գիւղի վրայ ձեռնադրելու և որոշեց դիմել Կարսի պ. նահանգապետին օրինական հաւանութեան համար։

Ապրիլի 6-ին Սինոդը որոշեց դիմել Կարսի զինուորական նահանգապետին և խնդրել նրա հաւանութիւնը քիւրդ Կիւրեղ և Սարգիս եղբայրներին Հայաստանեաց եկեղեցու ծոցն ընդունելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց զրկել քահանայութեան կոչումից Տաթևի վիճակի Կաւինձոր գիւղի ծխական Գրիգոր քահանայ Տէր-Սողոմոնեանցին նրա անվայել ընթացքի և գայթակղեցուցիչ գործերի համար կարգալոյծ անելով նրան. յիշեալ վճռի գործադրութիւնը յանձնել Երևանի Կոնսիստորիային և այդ մասին յայտնել մարմնաւոր իշխանութեան ի գիտութիւն։

Ապրիլի 8-ին Սինոդը ի նկատի ունենալով, որ փետրուարի 11-ի օրագրում Ղպչաղի Արմենակ Գաբոյեանցի մասին սխալ է տպրդուել և փոխանակ «սպասաւոր» գրելու գրել են սարկաւագ, որոշեց պատուիրել Երևանի Կոնսիստորիային, որ յիշեալ Արմենակ Գաբոյեանին ընդունեն որպէս չորրորդ աստիճանի սպասաւոր և ոչ թէ սարկաւագ, ինչպէս գրուած է նախկին օրագրում։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Թիֆլիսի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Վարդան Բուռնուսուզեանցին և նշանակել սպասաւոր Բորժոմ աւանի եկեղեցու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Զիմանշիրի գաւառի Դիւլեաթաղ գիւղի բնակիչ Սահակ Տէր-Զաքարեան Միրզաքիխեանցին Քառասնից գիւղի վրայ, որի մասին հրամանագրեց թեմական առաջնորդին։

Ապրիլի 11-ին Սինոդը որոշեց հոգևորականութեան մէջ ընդունել Ղզլար քաղաքի բնակիչ Վահան Թաւարբէկեանցին և դիմեց Թերէքեան շրջանի կառավարչին օրինական հաստատութիւն տուանալու։

Ապրիլի 13-ին Սինոդը քահանայութեան արժանի համարելով Մովսէս Մկրտումեան Ստեփանեանցին և Սեդրակ Պետրոսեան Մայիլեանցին Ղալադէ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, որոշեց դիմել Բաքուի պ. Նահանգապետին և խնդրել օրինական հաւանութիւն։

Նոյն թուին Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի թ. 285 ապրիլի 8-ին տուած սրբատառ կոնդակը, որով յայտնում է բարձրապատիւ Աշոտ վարդապետի հաստատութիւնը Ղարաբաղի թեմի առաջնորդութեան պաշտօնում, որոշեց բոլորագրութեամբ յայտնել Ղարաբաղի Կոնսիստորիային Ամենայն Հայոց Կաթուղիկոսի կոնդակի միտքը. նշանակել ռոճիկ հաստատութեան օրուանից, այն է փետրուարի 25-ից և տալ անցագիր ապահով երթևեկութեան համար։